

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 2/6

17 հունվարի 2017թ.

Քննարկվեց «Միլլ» ՍՊԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Մաշտոցի ՀՏ կողմից կիրառված «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը վերանայելու վերաբերյալ:

«Միլլ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.

Գանգատաբերը հայտնում է, որ «Միլլ» ՍՊԸ-ն հիմնադրվել է 09.12.2015թ.:

2016թ. շրջանառության հարկի 2-րդ եռամսյակի հաշվետվությունը հանձնվել է սխալմամբ նշելով 2015թ. 2-րդ եռամսյակ: Ընդ որում, ընկերությունը նշված ժամանակահատվածում գոյություն չի ունեցել:

Հարկային տեսուչի ցուցումով 18.07.2016թ. հանձնված վրիպակով հաշվետվությունն ուղղվել է և հանձնվել 20.08.2016թ., որը համարվել է ժամկետից ուշ ներկայացված: Նշված խնդրի վերաբերյալ սկսվել է վարչական վարույթ, որը պարզաբանական նամակի հիման վրա կասեցվել է:

21.10.2016թ. Մաշտոցի ՀՏ-ից տեղեկացվել է շրջանառության հարկի մասով գոյացած պարտքի մասին, որն իրականում գոյացել է հաշվետվությունն ուշացումով հանձնելու արդյունքում համակարգում հաշվարկված տուգանքի պատճառով, որի վերաբերյալ որևէ կերպ գանգատաբերը չի տեղեկացվել:

Հաշվի առնելով առաջացած խնդրի գոյացման պատճառը՝ գանգատաբերը խնդրում է դադարեցնել կամ կասեցնել հաշվետվության ուշացման հետևանքով առաջացած տուգանքը և վերացնել վճարված հարկերի նպատակայնությունը, քանի որ 2016թ. 3-րդ եռամսյակի վճարված շրջանառության հարկի գումարն ընդունվել է որպես տուգանքի վճարում և հարկի մասով դիտարկվել է որպես պարտք:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «Միլլ» ՍՊԸ կողմից սահմանված ժամկետում՝ 18.07.2016թ., ներկայացվել է շրջանառության հարկի 2016թ. 2-րդ եռամսյակի հաշվետվությունը, որում, սակայն, հաշվետու ժամանակաշրջանը 2016թ. 2-րդ եռամսյակի փոխարեն սխալմամբ նշվել է 2015թ. 2-րդ եռամսյակը: Նշված հաշվետվությունը Մաշտոցի ՀՏ կողմից համարվել է սահմանված ժամկետում չներկայացված, որի հետևանքով շրջանառության հարկի 2016թ. 2-րդ եռամսյակի հաշվետվությունն ընկերության կողմից ներկայացվել է կրկին անգամ՝ 20.08.2016թ.: Արդյունքում, Մաշտոցի ՀՏ կողմից կիրառվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ գումարով 130.553 դրամ:

Քննարկվող դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն.

«Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են»:

Հանձնաժողովի համոզմամբ, տվյալ դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ շրջանառության հարկի 2016թ. 2-րդ եռամսյակի հաշվետվությունում հաշվետու ժամանակաշրջանը սխալ է նշվել թյուրիմացության հետևանքով, այն մեխանիկական սխալի արդյունք է, այսինքն՝ թույլ տրված խախտումը, ըստ էության, կրում է ձևական բնույթ, քանի որ ընկերության վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարվել են: Մասնավորապես, ընկերության կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շրջանառության հարկի 2016թ. 2-րդ եռամսյակի հաշվետվությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում վճարվել է նշված հաշվարկով արտացոլված շրջանառության հարկը՝ գումարով 1.305.525 դրամ: Ընդ որում, սահմանված ժամկետում առաջին անգամ (վրիպակով), այնուհետև կրկին անգամ ներկայացված հաշվետվություններում արտացոլված տվյալները նույնական են (չեն փոփոխվել):

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

«Միլլ» ՍՊԸ անձնական հաշվի քարտից նվազեցնել «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի հիման վրա կիրառված տուգանքը՝ գումարով 130.553 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ